



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից
հրապարակված՝ «Էներգիայի արդյունավետ վերափոխման խթանում - 2020»
զեկույցի հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ	1
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	2
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ	5
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ	7

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Միջազգային կազմակերպությունների գնահատմամբ՝ երկրների բարեկեցությունը կախված է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի ոչ միայն մեծությունից, այլև որակից: Վերջինս, իր հերթին, սերտորեն շաղկապված է ներառական տնտեսական աճի հայեցակարգի հետ, որի չափանիշներից են *շրջակա միջավայրի պահպանությունը և կլիմայի փոփոխության կառավարումը*: Ակնհայտ է, որ էներգետիկ ենթակառուցվածքների գործունեությունը ունի էական ազդեցություն վերոհիշյալ երկու չափանիշների վրա: **Հետևաբար, էներգետիկ համակարգի վերափոխումը ավանդականից վերականգնվողի (այսուհետ՝ էներգիայի վերափոխման գործընթաց) չափազանց կարևոր է ներդաշնակ սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու տեսանկյունից:**

Համաշխարհային տնտեսությունում 2020 թվականի առաջին կիսամյակը նշանավորվեց աննախադեպ ճգնաժամային զարգացումներով, որոնք չշրջանցեցին նաև էներգիայի վերափոխման գործընթացը: Իսկապես, COVID-19-ի շուրջ հանգեցրեց ամբողջական պահանջարկի կրճատման, ինչի պայմաններում նվազեց էլեկտրաէներգիայի սպառումը, և խաթարվեց էլեկտրակայանների բնականոն գործունեությունը: Մյուս կողմից՝ այս շրջանում էներգիայի վերափոխման գործընթացը փոքր-ինչ անտեսվեց կառավարությունների կողմից, քանի որ առաջնային նշանակություն ստացավ տնտեսական անկումը մեղմելու հրամայականը:

Այդուհանդերձ, Համաշխարհային տնտեսական համաժողովը (ՀՏՀ) շարունակում է մշտադիտարկել էներգետիկ համակարգի ընթացիկ վիճակը աշխարհի տարբեր երկրներում: Ընդ որում, սկսած 2018 թվականից՝ ՀՏՀ-ն իր գնահատականներում հենվում է *էներգիայի վերափոխման ինդեքսի* (ԷՎԻ) հաշվարկի վրա, որը ներառվում է «էներգիայի արդյունավետ վերափոխման խթանում» վերտառությամբ ամենամյա զեկույցներում: Այս ինդեքսի միջոցով փորձ է արվում գնահատել, թե տվյալ երկրի էներգետիկ համակարգը ինչպիսի արդյունավետությամբ է իրականացնում հետևյալ գործառույթները՝

- ապահովել մատչելի էլեկտրաէներգիա տնային տնտեսությունների համար,
- սպասարկել տնտեսական աճը՝ ապահովելով էլեկտրաէներգիայի կայուն և անխափան առաջարկ տնտեսավարող սուբյեկտների համար,
- նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտումը էլեկտրաէներգիայի արտադրության գործընթացում,
- ունենալ անհրաժեշտ ենթակառուցվածքներ շարունակական վերափոխումների համար:

«Էներգիայի արդյունավետ վերափոխման խթանում - 2020» զեկույցում ԷՎԻ-ն հաշվարկվել է 115 երկրների կտրվածքով: Երրորդ տարին անընդմեջ (2018, 2019, 2020 թվականներ) վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցրել է Շվեդիան: Մյուս կողմից՝ ԷՎԻ-ի ամենացածր արդյունքը 2020-ին գրանցվել է Հայիթիում:


2020-ին Հայաստանը Էներգիայի վերափոխման գործընթացի վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով հետընթաց 10 հորիզոնականով: Հայաստանի դիրքը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կարելի է գնահատել որպես միջին:

«Էներգիայի արդյունավետ վերափոխման խթանում - 2020» զեկույցի կառուցվածքի մասով նշենք, որ այն կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասերի: Առաջին մասում ներկայացվում են ենթաինդեքսների հիմնական հատկությունները, իսկ երկրորդ մասում հիմնավորվում է Էներգիայի վերափոխման գործընթացի անհրաժեշտությունը:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԷՎԻ-ն խարսխված է **համակարգի արդյունավետության** և **վերափոխման պատրաստականության** ենթաինդեքսների վրա: Ինչպես ներկայացված է Գծապատկեր 1-ում, համակարգի արդյունավետության ենթաինդեքսը բաղկացած է 3 հայտանիշներից, իսկ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսը՝ 6: Հայտանիշները, իրենց հերթին, հիմնված են որոշակի տնտեսական ցուցանիշների վրա: Այսպես, համակարգի արդյունավետության ենթաինդեքսի հայտանիշներից է «Էներգետիկ հասանելիություն և անվտանգությունը», որի հիմքում (երրորդ օղակում) հետևյալ երեք ցուցանիշներն են՝ «Առաջարկի անվտանգություն», «Առաջարկի որակ» և «Էներգետիկ հասանելիություն»:

Գծապատկեր 1. ԷՎԻ-ի բաղադրիչները



ԷՎԻ-ի հաշվարկը մեկնարկում է Գծապատկեր 1-ի երրորդ օղակից, այն է՝ տնտեսական ցուցանիշներից: Յուրաքանչյուր ցուցանիշ ենթարկվում է ստանդարտացման¹՝ համապատասխանեցվելով 0-100 միջակայքի որոշակի արժեքի հետ: Այնուհետև ստանդարտացված ցուցանիշները միավորվում են համապատասխան հայտանիշներում՝ ելնելով Գծապատկեր 1-ում տրված կշիռներից: Օրինակ՝

$$\begin{aligned} & [\text{Էներգետիկ հասանելիություն և անվտանգություն}] = \\ & = 0.33 \left[\frac{\text{Առաջարկի}}{\text{անվտանգություն}} \right]^* + 0.33 \left[\frac{\text{Առաջարկի}}{\text{որակ}} \right]^* + 0.33 \left[\frac{\text{Էներգետիկ}}{\text{հասանելիություն}} \right]^*, \end{aligned}$$

որտեղ $*$ -ը ներկայացնում է ստանդարտացումը: Նույն տրամաբանությամբ հայտանիշները միավորվում են ենթաինդեքսներում, իսկ ենթաինդեքսները՝ ԷՎԻ-ում²:

ԷՎԻ-ի մեթոդաբանությունը և հատկապես՝ ցուցանիշների և հայտանիշների ընտրությունը, ելնում է այն իրողությունից, որ Էներգետիկ ոլորտը, լինելով տնտեսական համակարգի բաղադրիչներից մեկը, ոչ միայն ներազդում է մյուս բաղադրիչների գործունեության վրա, այլև կրում դրանց անմիջական ազդեցությունը:

Այս տեսանկյունից, **համակարգի արդյունավետության ենթաինդեքսը** արտացոլում է Էներգետիկ ոլորտի ազդեցությունը սպառողների և արտադրողների բարեկեցության, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա: Ինչպես գիտենք, Էներգետիկ համակարգի ցածր կատարողականը, որը կարող է դրսևորվել, օրինակ, բարձր սակագների կամ մատակարարման հաճախակի խաթարումների տեսքով, լրջագույն բեռ է թե՛ տնտեսության, թե՛ բնակչության համար: Հետևաբար, տնտեսության մրցունակությունը և բնակչության բարեկեցությունը ուղիղ համեմատական են Էներգետիկ համակարգի արդյունավետությանը: Միաժամանակ, այս փոխհարաբերություններում չպետք է անտեսել շրջակա միջավայրի պահպանության գործոնը: Խնդիրն այն է, որ վառելիքով (գազ, քարածուխ) աշխատող էլեկտրակայանների գործունեությունը կապված է ածխածնային արտանետումների հետ, որոնք, խաթարելով շրջակա միջավայրի և կլիմայի կայունությունը, վտանգի են ենթարկում ներկա և ապագա սերունդների առողջությունը և կյանքի որակը: Սա նշանակում է, որ համակարգի

¹ Տվյալ x ցուցանիշի ստանդարտացումը կատարվում է հետևյալ բանաձևով՝ $x^* = \frac{x - x_{min}}{x_{max} - x_{min}} \cdot 100$, որտեղ x_{min} -ը ցուցանիշի նվազագույն արժեքն է, իսկ x_{max} -ը՝ առավելագույն արժեքը:

² Մեթոդաբանության մասին առավել մանրամասն տե՛ս H. Singh et al., The energy transitions index: An analytic framework for understanding the evolving global energy system, Energy Strategy Reviews, Vol. 26, November, 2019, էջ 1-10:


արդյունավետության ենթահինդեքսը կարող է շարունակաբար բարելավվել միայն էներգիայի վերափոխման գործընթացի պարագայում:

Մյուս կողմից՝ **վերափոխման պատրաստականության ենթահինդեքսը** ներկայացնում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, ինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունը էներգիայի վերափոխման գործընթացի վրա: Թեև այս պարամետրերը անմիջականորեն կապված չեն էներգետիկ ոլորտի հետ, սակայն մեծապես պայմանավորում են այն միջավայրը, որը կարող է նպաստել կամ խոչընդոտել ոլորտի զարգացմանը: Պատահական չէ, որ համաձայն մի շարք հետազոտությունների՝ էներգիայի վերափոխման գործընթացը առավել բարեհաջող է ընթացել այն երկրներում, որոնց բնորոշ են օրենքի իշխանությունը, իրավական կարգավորումների հստակությունը, մարդկային կապիտալի բարձր որակը և այլն: Սա նշանակում է, որ էներգետիկ ենթակառուցվածքների բարելավումը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար ոլորտի վերափոխման գործընթացը խթանելու համար: Մեծ կարևորություն ունի նաև այն, թե էներգետիկ համակարգը և նրան ուղեկցող հանգամանքները որքանով են պատրաստ վերափոխումներին:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2020 թվականին ԷՎԻ-ն ՀՀ-ում կազմել է 54.9 միավոր, և այս ցուցանիշով 115 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը: Գծապատկեր 2-ը վկայում է, որ 2020-ին արձանագրվել է էական նահանջ ինչպես 2019-ի, այնպես էլ 2018-ի նկատմամբ: Իսկապես, 2019-ին Հայաստանը 57.2 միավորով զբաղեցրել է 50-րդ հորիզոնականը, իսկ 2018-ին՝ 54-րդ հորիզոնականը՝ 55.3 միավորով:

Գծապատկեր 2. ԷՎԻ-ի արժեքը և հորիզոնականը ՀՀ-ում 2018-2020թթ.



Հայաստանի նահանջը էներգիայի վերափոխման գործընթացում մեծ մասամբ պայմանավորված է համակարգի արդյունավետության ենթաինդեքսի նվազմամբ: Վերջինս 2020-ին 2019-ի համեմատ կրճատվել է շուրջ 8.0%-ով՝ կազմելով 60 միավոր՝ նախորդ տարվա 65.2 միավորի դիմաց: Ինչ վերաբերում է վերափոխման պատրաստականության ենթաինդեքսին, ապա այն 2020-ին կազմել է 49 միավոր՝ նախորդ տարվա 49.2 միավորի դիմաց: Սակայն այն, թե միավորների վերոհիշյալ նվազումը ո՞ր հայտանիշների կամ ցուցանիշների հաշվին է տեղի ունեցել, հնարավոր չէ գնահատել տվյալների սահմանափակության պատճառով:

Աղյուսակ 1. ԷՎԻ-ի բաղադրիչները ՀՀ-ում 2018-2020թթ.

Ցուցանիշ/հորիզոնական-միավոր	Հորիզոնական			Միավոր		
	2018	2019	2020	2018	2019	2020
Էներգիայի վերափոխման ինդեքս	54	50	60	55.3	57.2	54.9
Համակարգի արդյունավետության ենթաինդեքս	52	47	-	63.0	65.2	60*
Տնտեսական աճ և զարգացում	26	50	-	69.5	64.1	-
Շրջակա միջավայրի կայունություն	60	60	-	50.8	51.4	-
Էներգետիկ հասանելիություն և անվտանգություն	78	53	-	68.7	80.2	-
Վերափոխման պատրաստականության ենթաինդեքս	62	59	-	47.7	49.2	49*
Կարգավորում և քաղաքական հանձնառություն	67	57	-	49.2	55.0	-
Ինստիտուտներ և կառավարում	70	72	-	46.7	45.3	-
Կապիտալ և ներդրումներ	48	47	-	51.8	50.3	-
Ենթակառուցվածքներ և նորարար բիզնես միջավայր	86	67	-	39.5	44.8	-
Մարդկային կապիտալ և սպառողի մասնակցություն	86	91	-	25.5	25.9	-
Էներգետիկ համակարգի կառուցվածք	37	36	-	73.5	73.6	-

* Չեկույցում ենթաինդեքսների՝ 2020-ի արժեքները տրված են առանց տասնորդական մասերի:

Նկատենք, որ Աղյուսակ 1-ի որոշ վանդակներ բաց են, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020-ի զեկույցը, ի տարբերություն նախորդ տարիների, չի պարունակում տվյալներ ենթաինդեքսների բաղադրիչների վերաբերյալ:

2018-2019թթ. զարգացումների մասով հարկ է կրկին արժանագրել, որ ՀՀ ԷՎԻ-ի 1.9 միավոր աճին նպաստել են համակարգի արդյունավետության ենթաինդեքսի 2.2 միավոր և վերափոխման պատրաստականության ենթաինդեքսի 1.5 միավոր աճերը: Ընդ որում, համակարգի արդյունավետության

Ենթաինդեքսի աճին ամենամեծ նպաստումն է ունեցել «Էներգետիկ հասանելիություն և անվտանգություն» հայտանիշի աճը, որը կազմել է 11.5 միավոր: Ենթաինդեքսի աճին խթանել է նաև «Շրջակա միջավայրի կայունություն» հայտանիշի աճը, որը կազմել է 0.6 միավոր: Ինչ վերաբերում է վերափոխման պատրաստականության ենթաինդեքսի աճին, ապա նրան հիմնականում նպաստել են «Կարգավորում և քաղաքական հանձնառություն», ինչպես նաև «Ենթակառուցվածքներ և նորարար քիզնես միջավայր» հայտանիշների աճերը՝ համապատասխանաբար 5.8 և 5.3 միավորներով:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

2020 թվականի տվյալներով՝ Էներգիայի վերափոխման գործընթացի համաշխարհային առաջատարը Շվեդիան է, որտեղ ԷՎԻ-ն կազմում է 74.2 միավոր: Ընդ որում, համակարգի արդյունավետության ենթաինդեքսը 79 միավոր է, իսկ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսը՝ 69: Հատկանշական է, որ Շվեդիան զբաղեցրել է առաջին հորիզոնականը նաև 2018 և 2019թթ.:

Էներգիայի վերափոխման գործընթացում վատագույն կատարողականը երկրորդ տարին անընդմեջ (2020 և 2019թթ.) ցուցաբերել է Հայիթին, որի պարագայում ԷՎԻ-ն կազմել է ընդամենը 36 միավոր: Ընդ որում, չափազանց ցածր են և՛ համակարգի արդյունավետության, և՛ վերափոխման պատրաստականության ենթաինդեքսները՝ համապատասխանաբար 35 և 37 միավոր: Նշենք, որ 2018-ին ԷՎԻ-ի վարկանիշային աղյուսակը եզրափակել է Զիմբաբվեն (սակայն Հայիթին ներառված չէր հետազոտվող երկրների ցանկում):

Աղյուսակ 2-ը ներկայացնում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների փոխդասավորությունը 2020 թվականի դրությամբ՝ ըստ ԷՎԻ-ի: Երկրների այս խմբում առաջատարը Լիտվան է, որը համաշխարհային վարկանիշային աղյուսակում 15-րդն է՝ 65.1 միավորով: Նրան հաջորդում են Լատվիան և Էստոնիան: Հետնապահ հորիզոնականներում են Ուկրաինան, Բոսնիա և Հերցեգովինան և Ղրղզստանը: Ղրղզստանը համաշխարհային վարկանիշային աղյուսակում 105-րդն է՝ ընդամենը 42.7 միավորով: **Հայաստանի դիրքը պետք է գնահատել որպես միջին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն զիջում է Լիտվային (առաջատարին) հորիզոնականների ճիշտ նույն քանակով, որով գերազանցում է Ղրղզստանին (հետնապահին)³:** Նշենք նաև, որ երկրների այս խմբում ՀՀ-ն գտնվում էր վարկանիշային աղյուսակի միջին դիրքերում նաև 2018 և 2019թթ.: Ընդ որում, 2018-ին տարածաշրջանի առաջատարը Էստոնիան էր, որը համաշխարհային վարկանիշային

³ Իսկապես, $60 - 15 = 105 - 60$:

սանդղակում 26-րդն է՝ 61.3 միավորով: Իսկ 2019-ին առաջատարի դիրքում արդեն Լիտվան էր, որը համաշխարհային վարկանիշային սանդղակում զբաղեցնում էր 19-րդ հորիզոնականը՝ 64.5 միավորով:

**Աղյուսակ 2. ԷՎԻ-ն Արևելյան Եվրոպայի և
Կենտրոնական Ասիայի երկրներում 2018-2020թթ.**

Երկիր	Հորիզոնական						Ինդեքս		
	Տարածաշրջանային			Համաշխարհային					
	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020
Լիտվա	2	1	1	27	19	15	61.1	64.5	65.1
Լատվիա	3	3	2	29	23	16	60.5	63.7	64.9
Էստոնիա	1	2	3	26	20	21	61.3	64.2	63.3
Սլովենիա	4	4	4	33	24	23	59.5	63.6	63.1
Հունգարիա	13	9	5	55	41	31	55.3	59.2	60.7
Սլովակիա	6	6	6	42	33	33	57.8	61.0	60.5
Ռումինիա	7	8	7	43	40	35	57.5	59.3	59.9
Խորվաթիա	11	10	8	52	42	37	55.7	59.2	59.7
Վրաստան	9	5	9	45	32	41	56.9	61.1	58.8
Չեխիա	10	11	10	51	49	42	56.0	57.3	58.5
Ադրբեջան	8	14	11	44	57	44	57.2	55.4	58.1
Ալբանիա	5	7	12	40	38	52	58.4	59.5	56.5
Հայաստան	12	12	13	54	50	60	55.3	57.2	54.9
Բուլղարիա	20	17	14	92	77	61	46.0	51.0	54.2
Մոնտենեգրո	19	13	15	89	55	62	46.7	55.5	54.2
Լեհաստան	14	16	16	67	75	69	51.2	51.4	52.9
Մոլդովա	15	15	17	68	69	72	51.0	52.4	52.4
Ռուսաստան	16	18	18	70	79	80	50.9	50.3	50.5
Տաջիկստան	18	20	19	82	88	81	47.9	48.5	49.8
Ղազախստան	17	19	20	75	83	88	49.7	49.5	48.3
Սերբիա	21	21	21	100	99	100	43.7	45.7	44.3
Ուկրաինա	22	22	22	104	107	102	41.4	41.5	43.3
Բոսնիա և Հերցեգովինա	23	23	23	109	104	103	40.6	42.7	43.2
Ղրղզստան	24	24	24	112	110	105	39.3	40.0	42.7

Աղյուսակ 2-ը հուշում է, որ որ ԷՎԻ-ի բացասական դինամիկայով հանդերձ՝ Հայաստանը 2020-ի դրությամբ ունի շոշափելի առավելություն ԵԱՏՄ տարածքի մյուս երկրների նկատմամբ⁴: Այսպես, վարկանիշային աղյուսակում Հայաստանին ամենամոտ գտնվող ԵԱՏՄ երկիրը՝ Ռուսաստանը, զբաղեցնում է ընդամենը 80-րդ հորիզոնականը (50.5 միավոր): Իրավիճակը առավել անբարենպաստ է Ղազախստանի և Ղրղզստանի պարագայում, որոնք զբաղեցնում են համապատասխանաբար 88-րդ (48.3 միավոր) և 105-րդ (42.7

⁴ ԵԱՏՄ երկրներից Բելառուսը ներառված չէ ԷՎԻ-ի հաշվարկներում:

միավոր) հորիզոնականները: Ուշագրավ է, որ ԵԱՏՄ երկրների դասավորությունը նույնն էր նաև 2018 և 2019թթ.:

Աղյուսակ 3. ՀՀ և հարևան երկրների ԷՎԻ-ի ցուցանիշների համեմատականը 2018-2020թթ.

Ցուցանիշ/երկիր	Հայաստան			Վրաստան			Ադրբեջան			Թուրքիա			Իրան		
	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020
Էներգիայի վերափոխման ինդեքս	55.3	57.2	54.9	56.9	61.1	58.8	57.2	55.4	58.1	54.3	54.5	53.1	41.3	43.9	43.5
Համակարգի արդյունավետության ենթաինդեքս*	63.0	65.2	60	63.7	64.4	61	66.5	63.0	67	58.4	59.8	57	50.2	54.4	55
Վերափոխման պատրաստականության ենթաինդեքս*	47.7	49.2	49	50.2	57.7	57	47.9	47.8	49	50.2	49.2	49	32.3	33.3	32
Էներգիայի վերափոխման ինդեքսի հիման վրա զբաղեցրած հորիզոնականը	54	50	60	45	32	41	44	57	44	58	64	67	106	101	101

* Ձեկույցում ենթաինդեքսների՝ 2020-ի արժեքները տրված են առանց տասնորդական մասերի:

Ինչ վերաբերում է Հայաստանի անմիջական հարևաններին, ապա Վրաստանը և Ադրբեջանը էներգիայի վերափոխման գործընթացում գրանցել են ավելի բարձր արդյունքներ՝ «տեղակայվելով» համապատասխանաբար 41-րդ (58.8 միավոր) և 44-րդ (58.1 միավոր) հորիզոնականներում (Աղյուսակ 3): Մյուս երկու հարևանները՝ Թուրքիան և Իրանը, զբաղեցնում են առավել ցածր հորիզոնականներ՝ համապատասխանաբար 67-րդ (53.1 միավոր) և 101-րդ (43.5 միավոր): Տարածաշրջանում երկրների դասավորությունը նույնն էր նաև 2018-ին: Իսկ 2019-ին ԷՎԻ-ով Հայաստանը հարևան երկրներից հետ էր մնում միայն Վրաստանից, որը 32-րդ հորիզոնականում էր՝ 61.1 միավորով: Այլ կերպ ասած՝ 2019-2020թթ. ժամանակահատվածում Հայաստանի դիրքի վատթարացումը 10 հորիզոնականով ուղեկցվել է Ադրբեջանի դիրքի բարելավմամբ 13 հորիզոնականով: Արդյունքում վերջինիս ԷՎԻ-ին կազմել է 58.1 միավոր՝ նախորդ տարվա 55.4 միավորի դիմաց:

Համեմատելով ցուցանիշները ըստ ենթաինդեքսների՝ պարզ է դառնում, որ 2020-ի դրությամբ Հայաստանը համակարգի արդյունավետության ենթաինդեքսով զիջում է Ադրբեջանին և Վրաստանին և գերազանցում Թուրքիային և Իրանին: Հատկանշական է, որ ուժերի դասավորությունը նույնն էր նաև 2018-ին: Իսկ 2019-ին Հայաստանը գերազանցում էր հարևան բոլոր երկրներին:

Վերափոխման պատրաստականության ենթաինդեքսի մասով նշենք, որ 2020-ի դրությամբ տարածաշրջանի առաջատարը Վրաստանն է: Երկրորդ տեղը կիսում են Հայաստանը, Ադրբեջանը և Թուրքիան, իսկ վարկանիշային աղյուսակը

Եզրափակում է Իրանը: 2018-ին Հայաստանը գտնվում էր չորրորդ հորիզոնականում՝ գերազանցելով միայն Իրանին, իսկ 2019-ին՝ երրորդ հորիզոնականում՝ գերազանցելով Ադրբեջանին և Իրանին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**